ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հայ–վրացական հաշտության կոնֆերանսը տեղի է ունեցել՝**

1) 1918 թ. դեկտեմբերի 7–19–ին
2) 1919 թ. հունվարի 7–19–ին
3) 1920 թ. հունվարի 9–17–ին
4) 1919 թ. հունվարի 9–17–ին

2 **ՀՍԽՀ-ում գյուղատնտեսական միասնական հարկը շրջանառության մեջ է մտել՝**

1) 1924 թ.
2) 1921 թ.
3) 1922 թ.
4) 1923 թ.

3 **Արամ անունով երկիրը հիշատակվում էր դեռևս.**

1) Ք. ա. XXIV դարում
2) Ք. ա. XXVIII դարում
3) Ք. ա. XXIII դարում
4) Ք. ա. XXII դարում

4 **Ո՞ր թվականից է Հայաստանում երկրորդ անգամ գահակալել Սոհեմոս–Տիգրանը.**

1) 164 թ.
2) 163 թ.
3) 165 թ.
4) 161 թ.

5 **Ե՞րբ պարսից գերությունից հայրենիք վերադարձան ողջ մնացած հայ նախարարները.**

1) 464 թ.
2) 459 թ.
3) 461 թ.
4) 462 թ.

6 **Ե՞րբ է գահակալել Դավիթ Անհողինը.**

1) 989–1045 թթ.
2) 998–1047 թթ.
3) 989–1048 թթ.
4) 1001–1059 թթ.

7 Ե՞րբ է Մովսես Սարաֆյանը Հայաստանի ազատագրության իր ծրագիրը ներկայացրել Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային.

1) 1768 թ.
2) 1769 թ.
3) 1771 թ.
4) 1767 թ.

8 Ե՞րբ է տեղի ունեցել Սարգիս Կուկունյանի արշավանքը.

1) 1891 թ. սեպտեմբերի 22–ին
2) 1890 թ. հունիսի 22–ին
3) 1890 թ. սեպտեմբերի 22–ին
4) 1892 թ. հունվարի 30–ին

9 Քանի՞ գավառ ուներ Վասպուրական նահանգը.

1) 20
2) 37
3) 34
4) 41

10 Ո՞վ է հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները.

1) Շամ
2) Երվանդ I
3) Երվանդ II
4) Արշամ

11 Որքա՞ն էր նախարարական հեծելազորի ընդհանուր թիվն ըստ Զորանամակի.

1) 100 000
2) 95 000
3) 55 000
4) 48 0000

12 Հայոց ո՞ր կաթողիկոսն է Աշոտ III–ին օծել հայոց թագավոր.

1) Հովհաննես Դրասխանակերտցին
2) Անանիա Մոկացին
3) Գևորգ Գառնեցին
4) Խաչիկ Ա–ն

13 **Ո՞վ էր Բայազետի 500–հոգանոց կամավորական ջոկատի հրամանատարը.**

1) Գ. Մանուչարյանը
2) Սումբատովը
3) Մելիք–Մարտիրոսյանը
4) Մ. Վեքիլյանը

14 **Որքա՞ն հայկական դպրոց ու վարժարան է վերացվել Մեծ եղեռնի ժամանակ.**

1) 2500
2) 1350
3) 2350
4) 1500

15 **Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր՝**

1) Միհրան Տամատյանը
2) Սարգիս Ճեպեճյանը
3) Ներսես Թավուգճյանը
4) Պետրոս Սարաճյանը

16 **Ո՞վ էր Հայկական ազգային կոմիտեի ղեկավարը, որը հուշագիր ներկայացրեց ՄԱԿ–ի անդրանիկ կոնֆերանսին.**

1) Սիմոն Վրացյանը
2) Ավետիս Ահարոնյանը
3) Պողոս Նուբարը
4) Համո Օհանջանյանը

17 **Ո՞վ է ստորև բերված վկայության հեղինակը.**
«Հայաստանն… ամՀել է Արտաշեսի ջանքերով… , և ուստի այստեղ բոլորը միալեզու են»:

1) Ապպիանոսը
2) Ստրաբոնը
3) Պոլիբիոսը
4) Պլուտարքոսը

18 **Ընտրել հայոց թագավորի խոսքի ճիշտ շարունակությունը.**
«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, …» ՝

1) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես հեռացրել Հայոց տանից»:
2) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես դուրս բերել Հայոց տանից»:
3) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես կալանավորել»:
4) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:

19 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է սխալ.**

1) Տիգրան Մեծի կրտսեր եղբայր Գուրասի պաշտոնն էր Հյուսիսային Միջագետքի փոխարքա:
2) Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին Ասիայի եվրոպացիներ:
3) Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:
4) Արտաշեսյանների գահակալության ամբողջ ժամանակաշրջանում Մեծ Հայքի արքայի կրած տիտղոսը կոչվում էր «Արքայից արքա»:

20 **Երկրամասը կառավարելու համար Նժդեհի ղեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվում էր՝**

1) Զանգեզուրի ազատագրական կոմիտե
2) Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ
3) Զանգեզուրի միացյալ խորհուրդ
4) Զանգեզուրի աշխատավորության ժամանակավոր կոմիտե

21 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ բնորոշում Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխության անմիջական հետևանքները.**

ա. միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության
բ. տապալվեց Ժողկոմխորհի իշխանությունը
գ. երկրում ձևավորվեց Ժամանակավոր կառավարություն
դ. իշխանությունը զավթեցին բոլշևիկները
ե. իշխանությունը հանձնվեց Համառուսաստանյան սահմանադիր ժողովին

1) ա, գ
2) գ, ե
3) ա, ե
4) բ, դ

22 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական արդյունքներ չեն.**

ա. Սելևկյանների դեմ համառ ու երկարատև կռիվների արդյունքում Արտաշես I-ը Մեծ Հայքին միացրեց Տմորիք երկրամասը:
բ. Տիրանի հետ ունեցած բարդ հարաբերությունների արդյունքում հայոց զորքերի հրամանատարներ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները հեռացան իրենց տոհմական աշխարհը՝ Տայք:
գ. 748–750 թթ. ապստամբության արդյունքում Արաբական խալիֆայությունը ստիպված էր Հովհաննին նշանակել «Լեռան» կառավարիչ:
դ. 591 թ. բաժանման արդյունքում Հայաստանի մեծ մասն անցավ Պարսկաստանին:
ե. Հայերի 774–775 թթ. ապստամբության արդյունքում խալիֆայությունը ստիպված էր Սասուն գավառը դուրս բերել «Ջազիրա» նահանգից և միացնել Արմինիային:

1) ա, գ
2) դ, ե
3) բ, ե
4) բ, դ

23 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

ա. Խոսրով I–ի ձերբակալումը Կարակալլա կայսեր կողմից
բ. Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
գ. Արտավազդ V-ի գահակալելը Մեծ Հայքում
դ. Տրդատ II–ի հռչակվելը Հայոց թագավոր
ե. Վաղարշ II-ի զոհվելը
զ. Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերի սպանվելը

1) ե
2) գ
3) բ
4) դ

24 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. համատարած կոլեկտիվացման անցկացումը Երևանի գավառում, Լենինականի ու Լոռու գավառների մեծ մասում
բ. ՀՅԴ, այսպես կոչված, ինքնավերացման համագումարը Երևանում
գ. Երևանի կաուչուկի գործարանի կառուցման սկիզբը
դ. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում
ե. Լենինականի հէկի գործարկումը
զ. ՀԿԵՄ–ի ստեղծումը

1) զ, բ, ե, դ, ա, գ
2) բ, գ, զ, ե, դ, ա
3) զ, բ, դ, ե, ա, գ
4) բ, դ, զ, ե, ա, գ

25 **Կատարել համապատասխանեցում.**

N	Գետը	N	Ակունքը	N	Երկարությունը
1	Արաքս	1	Ծաղկանց և Ծաղկավետ լեռներ	1	500 կմ (Հայաստանի մասում)
2	Տիգրիս	2	Խաչափայտի լեռներ	2	1113 կմ (Հայաստանի մասում)
3	Ճորոխ	3	Բյուրակնյան լեռներ	3	345 կմ
4	Եփրատ	4	Հայկական պար և Նազիկ լիճ	4	400 կմ (Հայաստանի մասում)
		5	Հայկական Տավրոս և Ծովք լիճ	5	1000 կմ

1)

1	3	5
2	5	4
3	4	3
4	1	2

2)

1	2	5
2	4	3
3	3	1
4	1	4

3)

1	3	5
2	5	4
3	2	3
4	1	1

4)

1	2	2
2	3	5
3	1	4
4	4	1

26 **Հայտնի գիտնականների անունները համապատասխանեցնել մասնագիտություններին.**

1. Անդրեաս Արծրունի
2. Զակոմո Չամչյան
3. Հովհաննես Ադամյան
4. Խորեն Սինանյան
5. Նազարեթ Տաղավարյան

ա. երկրաբան, բյուրեղաքիմիկոս
բ. աստղագետ
գ. բժիշկ, գյուղատնտես
դ. լեզվաբան, պատմաբան
ե. քիմիկոս
զ. ֆիզիկոս

1) 1–ա, 2–ե, 3–զ, 4–բ, 5–դ
2) 1–ե, 2–ա, 3–զ, 4–բ, 5–դ
3) 1–ա, 2–ե, 3–զ, 4–բ, 5–գ
4) 1–ե, 2–ա, 3–բ, 4–զ, 5–գ

27 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. 1701 թ. մինչև իր կյանքի վերջը Արցախում եռանդուն գործունեություն է ծավալել Եսայի Հասան–Ջալալյանը:
բ. Հ. Էմինը 1758 թ. եկել է Հայաստան մոտիկից ծանոթանալու տիրող իրավիճակին:
գ. Նիկոլայ I–ի 1828 թ. մարտի 21–ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմվել է Հայկական մարզը:
դ. 1844 թ. Կ. Պոլսում ստեղծված Ազգային ժողովի անդամների մեծ մասը հայ մեծահարուստ ամիրաներն էին:
ե. Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ 1878 թ. մայիսի 18–ին, Լոնդոնում կնքված անգլո–թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան Թուրքիայից ստացավ Կիպրոս կղզին:

1) ա, դ
2) բ, դ
3) գ, ե
4) բ, ե

28 **Ե՞րբ է Թորոս I–ը գրավել Սիս և Անավարզա քաղաքները.**

1) 1104 թ.
2) 1111 թ.
3) 1109 թ.
4) 1107 թ.

29 **Ե՞րբ է տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեն.**

1) 1991 թ. հունվարի 10–ին
2) 1991 թ. դեկտեմբերի 10–ին
3) 1991 թ. սեպտեմբերի 2–ին
4) 1991 թ. օգոստոսի 30–ին

30 **Որքա՞ն էր հռոմեական բանակի կորուստը Խառանի ճակատամարտում.**

1) 24 հազար սպանված, 16 հազար գերի
2) 40 հազար սպանված, 12 հազար գերի
3) 30 հազար սպանված, 20 հազար գերի
4) 20 հազար սպանված, 10 հազար գերի

31 **Ո՞վ է «Սալոմե» կտավի հեղինակը.**

1) Հովհաննես Այվազովսկին
2) Եղիշե Թադևոսյանը
3) Վարդգես Սուրենյանցը
4) Գևորգ Բաշինջաղյանը

32 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասաց. «Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

1) Յակով Զարոբյան
2) Աղասի Խանջյան
3) Ասքանազ Մռավյան
4) Գրիգոր Հարությունյան

33 **Ո՞ր իրադարձությունից հետո են ասվել հետևյալ խոսքերը.**

«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:

1) Արևմտահայ ազգային խորհրդի կազմավորումից հետո
2) Հայոց ազգային խորհրդի կազմավորումից հետո
3) Հայոց ազգային համախորհրդակցությունից հետո
4) Հայոց ազգային բյուրոյի ստեղծումից հետո

34 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ.**

ա. Արդեն XI դարում վանական և աշխարհիկ դպրոցների հիման վրա ձևավորված նոր տիպի դպրոցները կոչվեցին վարդապետարաններ:
բ. Միջնաբերդի շուրջը տարածվող բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
գ. Շարականներ էին կոչվում միջնադարյան աշուղների երգած երգերը:
դ. Վաղ քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով:
ե. Պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող–խաչարձանը կոչվում է խաչքար:

1) բ, ե
2) ա, դ
3) ա, գ
4) գ, դ

35 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները.**

ա. Ս. Կիրովի սպանությունը պատճառ հանդիսացավ տրոցկիստների ազատ գործունեության համար:
բ. 1949 թ. Հայաստանից բոլոր սփյուռքահայերի՝ Ալթայի երկրամաս արտաքսվելու իրական պատճառը նրանց անդամակցությունն էր «Դաշնակցություն» կուսակցությանը:
գ. 1925 թ. խորհրդա–թուրքական պայմանագրի դենոնսացիան պայմանավորված էր Երկրորդ աշխարհամարտում Թուրքիայի՝ Գերմանիային փաստացի դաշնակցելով:
դ. Ա. Խանփերյանցի ձերբակալման պատճառը դավաճանությունն էր հայրենիքին:
ե. Սառը պատերազմը պատճառ հանդիսացավ, որ ԽՍՀՄ ղեկավարությունը հրաժարվի Թուրքիայից հայկական հողերի պահանջներից:

1) ա, ե
2) գ, ե
3) գ, դ
4) բ, դ

36 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

ա. Տարոնի, Վասպուրականի և Աղձնիքի ենթարկվելը մոնղոլներին
բ. Մառիի ճակատամարտը
գ. հայ–վրացական ջոկատները մամլուքների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշման և հարկերի բարձրացման պատճառով բռնկված հակամոնղոլական ապստամբության սկիզբը
դ. մոնղոլների կողմից Երզնկայի, Տևրիկի, Սեբաստիայի ու Կեսարիայի գրավումը
ե. մոնղոլների դեմ վրաց թագավորի մասնակցությամբ հայ և վրաց իշխանների նախապատրաստած ապստամբության բացահայտումը և ճնշումը
զ. Սմբատ Գունդստաբլի կողմից դատաստանագրքի կազմումը

1) դ
2) բ
3) ե
4) զ

37 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա. Մեղրիի ճակատամարտը՝ հայկական զորքի հաղթանակը թուրքերի նկատմամբ
բ. Էջմիածնի գաղտնի ժողովի գումարումը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ
գ. Բաղիշեցի վաճառական մահտեսի Շահմուրատի ժամանումը Փարիզ՝ բանակցությունները շարունակելու համար
դ. Օրու ժամանումը Սպահան
ե. Դավիթ բեկի մահը
զ. Էրզրումի թուրք–պարսկական պայմանագրի կնքումը

1) գ
2) ե
3) դ
4) ա

38 **Միջնադարյան հայ մշակույթի նշանավոր գործչի անունը համապատասխանեցնել ստեղծագործելու վայրին.**

1. Հռոմկլա	ա. Սարգիս Պիծակ
2. Սկևռա	բ. Թորոս Տարոնացի
3. Գոշավանք	գ. Գրիգոր Մլիճեցի
4. Գլաձոր	դ. Թորոս Ռոսլին
5. Սիս	ե. Պողոս
	զ. Մանուել

1) 1–դ, 2–զ, 3–զ, 4–բ, 5–ա
2) 1–զ, 2–ա, 3–ե, 4–բ, 5–դ
3) 1–դ, 2–զ, 3–ե, 4–բ, 5–ա
4) 1–ա, 2–բ, 3–ե, 4–զ, 5–դ

39 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայկական կորպուսի և արևմտահայ զինուժի միավորմամբ ստեղծված զորամիավորը կոչվում էր Հայկական առանձին հարվածային զորամաս:
2) Ալեքսանդրապոլում ստեղծված ազատագրական խմբակը կոչվում էր «Բարենպաստ ընկերություն»:
3) Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական կամավորական ութ ջոկատներից վերակազմակերպված հինգ զորամիավորները կոչվում էին հայկական հրաձգային գումարտակներ:
4) «Արիական հայազգի զավակների» ստեղծած խմբակը կոչվում էր «Հայրենիքի սիրո գրասենյակ»:
5) Բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Ժողկոմխորհ:
6) Ռուսաստանի կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարին տրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»:

40 **Թվարկվածներից որո՞նք Գավգամելայի ճակատամարտի արդյունք չեն:**

1) Միթրաուստեսը հռչակեց Փոքր Հայքի անկախությունը:
2) Օրոնտես Երվանդ III–ը դարձավ Մեծ Հայքի թագավոր:
3) Ստեղծվեց միասնական հայկական թագավորություն:
4) Հայաստանը թոթափեց աքեմենյան գերիշխանությունը:
5) Սելևկյան պետությունը մասնատվեց ստրատեգիաների:

41 **Գտնել սխալ պատասխանները.**

Հայ–ռուսական 1920 թ. հոկտեմբերի 28–ի արձանագրությամբ կողմերը պարտավորվում էին ստորագրել «Հաշտության պայմանագիրը» հետևյալ պայմաններով՝

1) Հայաստանը պետք է հրաժարվեր Ղարաբաղից:
2) Հայաստանը համաձայնվում էր, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես զբաղեցվեին ռուսական զորքերի կողմից՝ մինչև հարցի վերջնական լուծումը:
3) Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանին տրամադրել 2,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ:
4) Հայաստանը պետք է ընդուներ Ռուսաստանի բարեկամական օժանդակությունը Թուրքիայի հետ վեճերը լուծելու խնդրում՝ այն դեպքում, երբ թուրքական զորքերը հետ կքաշվեին մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանը:
5) Հայաստանը պետք է ընդուներ կարմիրների առաջարկը խորհրդայնացման մասին:
6) Ռուսաստանը և Ադրբեջանը պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ:

42 **Ո՞ր իրադարձությունն է խախտել տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Ֆրիդրիխ Շիկամորուսի խեղդվելը Կիլիկիայում
2) Անիի ազատագրումը Զաքարյանների կողմից
3) Լամբրոնի բերդի գրավումը Լևոն II-ի կողմից
4) Թամար թագուհու կառավարման ավարտը
5) Դվինի ազատագրումը Զաքարյանների կողմից
6) Կարսի ազատագրումը Զաքարյանների կողմից

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Պոնտոսի Զելա քաղաքի մոտ հայ–պոնտական ուժերի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ
2) Տիգրան II–ի և Գոդերձ II–ի միջև պայմանագրի կնքումը
3) հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
4) Արտաշատի պաշարումը Հրահատ III–ի կողմից
5) հայկական զորքերի ներխուժումը Կապադովկիա՝ հայ–պոնտական դաշինքի համաձայն

44 **Փաստերը համապատասխանեցնել հայկական ազգային դիվիզիաների անուններին.**

Ա. 409–րդ հրաձգային դիվիզիա
Բ. 408–րդ հրաձգային դիվիզիա
Գ. 76–րդ լեռնահրաձգային դիվիզիա
Դ. 89–րդ հրաձգային դիվիզիա
Ե. 390–րդ դիվիզիա

Ա	Բ	Գ	Դ	Ե

1) Թաման թերակղզու ազատագրման գործում ունեցած հերոսական մասնակցության համար շնորհվել է Թամանյան անունը:
2) Դիվիզիայի անձնակազմից 19 հոգի արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման:
3) Կազմավորվել է ՀՀ բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման արդյունքում:
4) Փակել է գերմանական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս Նովոռոսիյսկ–Տուապսե շրջանում:
5) 1942 թ. մարտի սկզբներին մասնակցել է Կերչի մարտերին:
6) Մարտական ուղին ձգվել է Մոզդոկից մինչև Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա, Չեխոսլովակիա:

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

45.1 Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի կողմից Սալմաստում հրավիրված գաղտնի խորհրդակցությունը որոշել է նրա գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա:

45.2 Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցներից էր Աղվանից եկեղեցին, որի կաթողիկոսանիստ կենտրոնը XV դարի վերջերին դարձավ Գանձասարի վանքը:

45.3 Այրարատյան նահանգի կառավարիչ Յաղուբ բեկը ոչ միայն չի խոչընդոտել Էջմիածնում մեծ ժողովի գումարումը, այլև նպաստավոր պայմաններ է ստեղծել հայ ժողովականների համար:

45.4 Միքայել Սեբաստացի կաթողիկոսը Սեբաստիայում գումարած գաղտնի ժողովի անունից Աբգար Թոխաթեցու ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկել Վենետիկ:

45.5 Էջմիածինը XIV դ. կեսերից կրկին դարձել է Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրը:

45.6 «Շահ–ի Արման» Կարա–Յուսուֆի մահից հետո գահն անցել է Ջհանշահին:

Բ մակարդակ

46 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Հայկական II–V կամավորական ջոկատներից ստեղծված միացյալ զորախումբն անվանվել է «Արարատյան զորաբաժին»:
բ. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվել է Հայոց ազգային կենտրոնական բյուրո:
գ. Անդրանիկի գլխավորությամբ 1903 թ. Սասունին օգնության հասած ձիավոր խումբը կոչվում էր «Մրրիկ»:
դ. Քրդական կառավարական ջոկատները հայտնի էին «չելլոներ» անունով:
ե. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ երիտթուրքերի «Միություն և փրկություն» կոչվող կազմակերպությունը:
զ. Բրեստ–Լիտովսկի բանակցությունների երկրորդ փուլում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը կոչվում էր «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների»:
է. Հովսեփ Արղությանը գլխավորեց Հայոց ազգային բյուրոյի՝ գործադիր (կարգադրիչ) կոչվող մարմինը:

1) ա, դ, զ, ե
2) ա, բ, գ, է
3) բ, գ, զ, է
4) ա, գ, դ, ե

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. ԽՍՀՄ–ում առաջնահերթ կարգով թեթև արդյունաբերական և սննդի ձեռնարկությունների ստեղծման քաղաքականությունը կոչվեց արդյունաբերացում:
բ. Հայ տրոցկիստների առաջին ելույթը հրապարակվել է «Երեքի դեկլարացիա» անունով:
գ. Գյուղի կոլեկտիվացման ընթացքում իրենց աշխատանքի շնորհիվ կայուն տնտեսություն ստեղծած խավը հայտնի էր կուլակ անվանումով:
դ. 1920–ական թթ. ստեղծված գյուղացիական միացյալ տնտեսությունների ձևերից էին սովխոզները, արտելները, կոմունաները:
ե. Գյուղացիության մեծամասնությունը կազմող միջակ գյուղացուն ունեզրկման, ընտանիքով գյուղից վտարման քաղաքականությունը կոչվեց կուլակաթափություն:
զ. Ալեքսանդրապոլում 1920 թ. բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ):
է. 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց լուծարման մասին հայտարարությամբ, կոչվեց ինքնավերացման համագումար:

1) ա, գ, է
2) բ, դ, զ
3) ա, գ, զ
4) բ, ե, է

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Արտաշես I–ի արշավանքների արդյունքում Փոքր Հայքը միացվեց հայկական պետությանը:

բ. Արտաշես I–ի վարչական բարեփոխման արդյունքում երկիրը բաժանվեց 120 գավառների (ստրատեգիաների):

գ. Արտաշես I–ի արշավանքների արդյունքում Մեծ Հայքի բոլոր տարածքները միավորվեցին մեկ միասնական պետության մեջ՝ բացի Ծոփքից:

դ. Արտաշես I–ի կրոնական բարեփոխման արդյունքում երկիրը վերածվեց աստվածապետության:

ե. Արտաշես I–ի ռազմական բարեփոխման հետևանքով զորքը բաժանվեց 4 մասի՝ զորավարությունների:

զ. Արտաշես I–ի հողային բարեփոխումը նպաստեց ավատական հողատիրության զարգացմանը Հայաստանում:

է. Արտաշես I–ի հողային բարեփոխման արդյունքում միավորվեցին համայնքային և պետական հողերը:

1) բ, դ, ե
2) ա, գ, զ
3) բ, գ, ե
4) դ, զ, է

49 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում հռոմեացիների դիրքերի թուլացումն էր:

բ. Դենշապուհի աշխարհագրի հետևանքը Հայաստանում հարկերի անօրինակ ծանրացումն էր:

գ. Ներսեհապատի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:

դ. Գյուտ կաթողիկոսի՝ Տիզբոն մեկնելու պատճառը Խոսրով II–ի գումարած ժողովին մասնակցելն էր:

ե. VII դարի կեսերի արաբական արշավանքների հետևանքը Սասանյան տերության կործանումն էր:

զ. Հայաստանում Չարմաղանի հաջողությունների պատճառը Զաքարյանների իշխանապետությունում ներիշխանական երկպառակություններն էին:

է. Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը ուշ միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնաձիգ քաղաքականությունն էին:

1) բ, ե, զ
2) ա, դ, զ
3) բ, գ, է
4) ա, բ, ե

50 **Առաջին աշխարհամարտի տարիների իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Արևմտահայերի առաջին համագումարը
բ. «Արևելյան լեգեոնի» ստեղծումը
գ. ԱՀԿ–ի ստեղծումը
դ. Բաշ Ապարանի հերոսամարտի սկիզբը
ե. Երզնկայում զինադադարի ստորագրումը
զ. ԱԺԴՀ–ի ստեղծումը
է. Ուրֆայի հերոսամարտը
ը. Էրզրումի գրավումը ռուսական զորքի կողմից
թ. Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
ժ. Արամ Մանուկյանի նշանակվելը Վանի նահանգապետ

1) թ
2) գ
3) ա
4) բ

51 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գետաշենի հերոսական ինքնապաշտպանության ավարտը և շրջանի հայաթափումը
բ. Սպիտակի աղետալի երկրաշարժը
գ. Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու՝ արցախցիների ստորագրությամբ պահանջագրի ուղարկումը Մոսկվա
դ. «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամների կալանավորումը և տեղափոխումը Մոսկվա
ե. Բաքվի հայության կոտորածները և տեղահանությունը
զ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը, որտեղ մերժվեց ԼՂԻՄ–ը Խորհրդային Հայաստանին միացնելու արցախահայության արդարացի պահանջը
է. Խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին ժողովրդավարական և այլընտրանքային ընտրությունները
ը. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի կողմից ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20–ի որոշմանը համաձայնություն տալը
թ. «Օղակ» գործողության իրականացման սկիզբը Հյուսիսային Արցախում
ժ. «Ղարաբաղ» կոմիտեի համալրումը նոր անդամներով

1) ժ, բ, դ, ե, է, գ, ը, ա, զ, թ
2) գ, ժ, ը, զ, բ, դ, ե, է, թ, ա
3) ժ, գ, ը, զ, բ, դ, է, ե, թ, ա
4) գ, ժ, դ, ե, է, ա, զ, բ, ը, թ

52 **Թվարկված քաղաքներից ո՞րն է հիմնադրվել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Մծուրք
բ. Երվանդաշատ
գ. Մենուախինիլի
դ. Տուշպա
ե. Տիգրանակերտ
զ. Սամոսատ
է. Արշամաշատ
ը. Զարիշատ
թ. Էրեբունի

1) ը
2) զ
3) է
4) բ

53 **Կատարել համապատասխանեցում.**

Գործիչ	*Մասնագիտություն*
1. Ղուկաս Ինճիճյան	ա. նկարիչ
2. Ստեփանոս Ներսիսյան	բ. դրամատուրգ
3. Գալուստ Շերմազանյան	գ. ֆիզիոլոգ
4. Համբարձում Լիմոնճյան	դ. պատմաաշխարհագրագետ
5. Նիկողայոս Մառ	ե. դերասան
6. Մարի Բրոսե	զ. պատմաբան
7. Լեո	է. երաժշտագետ
8. Լևոն Օրբելի	ը. քանդակագործ
9. Երվանդ Ոսկան	թ. արևելագետ
	ժ. կովկասագետ

1) 1–դ, 2–ա, 3–բ, 4–ժ, 5–ը, 6–թ, 7–է, 8–գ, 9–ե
2) 1–ա, 2–ժ, 3–գ, 4–է, 5–բ, 6–դ, 7–ե, 8–զ, 9–ը
3) 1–դ, 2–ա, 3–բ, 4–է, 5–ժ, 6–թ, 7–զ, 8–գ, 9–ը
4) 1–բ, 2–գ, 3–զ, 4–թ, 5–ժ, 6–ա, 7–դ, 8–ե, 9–է

54 **Ընտրել սխալ պնդումները.**

ա. Ըստ Քսենոփոնի տեղեկության՝ Երվանդ II–ը ամուսնացած էր Աքեմենյան արքա Արտաքսերքսես II–ի դստեր հետ:
բ. Ք. ա. 522–521 թթ. ընթացքում բռնկված ապստամբության ժամանակ զորավար Վահումիսան Հյուսիսային Միջագետքում պարտություն կրեց հայերից:
գ. Դարեհ II–ը Աքեմենյան տերության տիրակալ դարձավ Ք. ա. 336 թ.:
դ. Աքեմենյան տերությունում վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:
ե. Մինչև Ք. ա. 331 թ. Հայաստանը Աքեմենյան տերության կազմում մնաց որպես սատրապություն:
զ. Դարեհ I–ի դեմ Բաղդադում բարձրացած ապստամբությունը գլխավորում էր Արախան՝ Խալդիտայի որդին:
է. Աքեմենյան արքա Արտաքսերքսես II–ի դեմ ապստամբել էր նրա եղբայր Կյուրոս Մեծը:

1) դ, ե, է
2) ա, զ, ե
3) գ, զ, է
4) ա, բ, զ

55 **Տրվածներից ո՞ր երեքը Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի կազմած՝ Հայաստանի ազատագրման և հայ–ռուսական դաշնագրի նախագծին վերաբերող կետերից չեն.**

ա. Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրվելու էր նավահանգիստ:
բ. Հայաստանում լինելու էր որոշակի քանակությամբ ռուսական զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար:
գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմվելու էր 25–հազարանոց բանակ, որից 10 հազարը պետք է մտներ Վրաստան:
դ. Հայոց թագավորն ընտրվելու էր ռուսաց կայսրի կողմից, որն այնուհետև օծվելու էր Էջմիածնում:
ե. Նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի:
զ. Զորաջոկատների հրամանատարը լինելու էր հայազգի և ենթարկվելու էր ռուսական հրամանատարությանը:
է. Հայաստանն ազատագրելուց հետո ստեղծվելու էր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնալու էր Հայաստանի թագավոր:

1) գ, դ, զ
2) ա, բ, է
3) ա, դ, ե
4) գ, զ, է

56 **Թվարկվածներից որո՞նք տեղ չեն գտել 1919 թ. փետրվարին Փարիզում ստորագրված հայկական պահանջների համատեղ հուշագրում.**

ա. Ճանաչել միացյալ հայկական անկախ պետությունը
բ. Պատժի ենթարկել հայկական ջարդերի կազմակերպիչներին
գ. Արևմտյան Հայաստանի վիլայեթներից կազմել երկու նահանգներ՝ քրիստոնյա կառավարիչներով
դ. Միացյալ Հայաստանի կազմի մեջ ներառել Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Էրզրում և Տրապիզոն), Կիլիկիայի 4 սանջակները, ինչպես նաև ՀՀ–ն իր ընդլայնված սահմաններով
ե. Հայաստանի հովանավորության մանդատը 20 տարով հանձնել դաշնակից պետություններից մեկին
զ. Թուրքիային ազատել հայերին պատճառած վնասների փոխհատուցումից
է. Ադրբեջանին զիջել Ղարաբաղը և Նախիջևանը

1) գ, զ, է
2) ա, բ, ե
3) գ, դ, է
4) ա, ե, զ

57 **Կատարել համապատասխանեցում.**

Ճակատամարտ

ա. Կոտմանի	ե. Դողսի
բ. Մանազկերտի	զ. Բասենի
գ. Ձիրավի	է. Հռանդեայի
դ. Բերդուսի	ը. Չմանկատուկի

Տարեթիվ

1. 62 թ.	6. 1071 թ.
2. 370 թ.	7. 1107 թ.
3. 371 թ.	8. 1220 թ.
4. 894 թ.	9. 1243 թ.
5. 1048 թ.	

1) ա–8, բ–6, գ–3, դ–7, ե–4, զ–5, է–1, ը–9
2) ա–9, բ–6, գ–2, դ–4, ե–7, զ–5, է–1, ը–8
3) ա–8, բ–2, գ–3, դ–7, ե–5, զ–6, է–1, ը–9
4) ա–9, բ–6, գ–2, դ–4, ե–7, զ–8, է–3, ը–5

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
2) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
3) Պարսից արքայի և հռոմեական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
4) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:
5) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
6) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մասն Մեծ Հայոց» անունով:
7) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստանիկներ:

59 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են զեմլյաներ:
2) Զանգեզուրի հայոց ազգային խորհուրդը 1919 թ. սկզբին վերակազմվեց և կոչվեց Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ:
3) Արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
4) Մենշևիկներն ու էսէռները սոցիալ–դեմոկրատական ուղղության ներկայացուցիչներ էին:
5) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվեց Հայաստանի փրկության կոմիտե:
6) 1920 թ. դեկտեմբերի 6–ին հիմնված մարմինը, որը պետք է նպաստեր երկրում խորհրդային կարգեր «ներդնելուն», կոչվում էր Արտակարգ հանձնաժողով (Չեկա):
7) Արտաքին օգնության կազմակերպման համար 1921 թ. սեպտեմբերին Երևանում Հովհաննես Թումանյանի նախագահությամբ ստեղծված կազմակերպությունը կոչվում էր Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ):
8) Հայաստանի միավորված ազգային կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի դարձավ Արմենկոմ անունով:

60 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Ք. ա. 94 թ. Արտաշատում կնքված հայ–պոնտական պայմանագրի համաձայն՝ հայ–պոնտական ուժերը ռազմակալեցին Կապադովկիան, սակայն քիչ անց ստիպված եղան հեռանալ այդտեղից:
2) Ակցիումի ճակատամարտից հետո հայ–պոնտական ուժերը մտան Հայաստան և առավել արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
3) Մագնեսիայի ճակատամարտում Աքեմենյան Պարսկաստանի զորքերի պարտության հետևանքով ձևավորվեց Սելևկյան հսկայածավալ պետությունը:
4) Ք. ա. 87 թ. կնքված հայ–պարթևական պայմանագրի համաձայն՝ պարթևները հայերին զիջեցին «Արքայից արքա» տիտղոսը:
5) Ոսխայի ճակատամարտի արդյունքում պարսից տերությունը տարածքային կորուստներ ունեցավ Փոքր Ասիայում:
6) Խառանի ճակատամարտում պարթևական զորքերի պարտությունը նպաստեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզի փոփոխմանը:
7) Զելայի ճակատամարտում Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց հայկական գերիշխանությունը Ասորիքում:

61 **Ընտրել ճիշտ պատասխանները.**
XIX ***դ. վերջին և XX դ. սկզբին հայ պատմագրության զարգացման արդյունքում՝***

1) Ձևավորվեց պատմագիտական նոր՝ համաշխարհային – տիեզերական պատմության ժանրը:
2) Ձևավորվեց Հայաստանի առանձին տարածաշրջաններին նվիրված պատմության շարադրանքը:
3) Վերանայվեցին հայ պատմագրության մեջ մինչ այդ գերիշխող հայացքները:
4) Կարևորվեցին պատմագիտությանն օժանդակող գիտաճյուղերի ձեռքբերումները:
5) Ձևավորվեց պատմագիտական նոր՝ ժամանակագրության ժանրը:
6) Հայոց պատմության լուսաբանման մեջ լայնորեն կիրառվեց կրոնաաստվածաբանական մոտեցումը:
7) Հայ պատմագիտական միտքը լուրջ ներդրում ունեցավ հայագիտության զարգացման մեջ:
8) Հաղթահարվեց հայոց պատմության լուսաբանման կրոնաաստվածաբանական մոտեցումը:

62 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Մլեհը բարեկարգեց Սիս քաղաքը և դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք։
2) Մլեհը խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը։
3) Մլեհի վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը։
4) Հարևան Եգիպտոսի և Իրանի հետ գործակցելու քայլերից դժգոհ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին Մլեհին։
5) Մլեհի իշխանության սկզբում Դաշտային Կիլիկիան կրկին Բյուզանդիայի տիրապետության տակ էր. միայն նրա արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին խաչակիրներին։
6) Մլեհը դաշնակցեց Տրիպոլիի ամիրայի հետ։
7) Մլեհը խաչակիրներից ազատագրեց Ադանա, Մսիս և Անարզաբա քաղաքները։

63 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) 1890 թ. հունիսին Թիֆլիսում հույժ գաղտնի պայմաններում սկսվեց ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը։
2) Արաբոն (Առաքել Մխիթարյանը) ծնվել է 1863 թ. Սասունի Կոռթեր գյուղում։
3) Կովկասյան ճակատում ռուսների հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի (Լոռու–Մելիքյան) հրամանատարությամբ գործող 70–հազարանոց Կովկասյան կորպուսն էր։
4) 1877 թ. ապրիլի 12–ին Ռուսաստանը պատերազմ սկսեց օսմանյան Թուրքիայի դեմ։
5) 1878 թ. սկզբին ռուսական զորքերը մտան Սոֆիա, ապա՝ Պլովդիվ և հասան Բելգրադի մատույցները։
6) Երևանյան ջոկատը 1877 թ. ապրիլի 30–ին գրավում է Բայազետը, ապա՝ նաև Դիադինն ու Ալաշկերտը։
7) 1894 թ. «Դրոշակում» տպագրվեց ՀՅԴ ծրագիրը։

64 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) ԱՄԿ ղեկավար մարմինը՝ խորհուրդը, ստեղծվեց՝ հայ ազգային կուսակցությունների գործողության միասնական ծրագիր մշակելու համար:
2) Հայկական լեգեոնը լուծարվեց, որովհետև մեծ տերությունները սկսեցին զիջումների գնալ և մերձենալ քեմալական Թուրքիայի հետ, իսկ ֆրանսիական իշխանությունները հրաժարվեցին Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրությունից:
3) Վ. Վիլսոնի իրավարար որոշմամբ միջազգայնորեն ճանաչվեցին Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները:
4) Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում ամրապնդվեցին Քառյակ միության դիրքերը:
5) ԽՍՀՄ կառավարության կողմից 1936 թ. Հայաստան ուղարկած հանձնաժողովը տեղում կազմակերպեց տրոցկիստական ընդդիմության գաղափարական և կազմակերպական ջախջախումը:
6) ԽՍՀՄ-ում ստալինյան իշխանությունները փոքր-ինչ մեղմացրին բռնությունները 1939 թվականից, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը:
7) Տարբեր երկրներում կազմակերպված հայկական ազգային խորհուրդների խնդիրն էր բոլոր միջոցներով օժանդակել ֆաշիզմի դեմ պայքարող երկրների հաղթանակին:
8) 1945 թ. ապրիլին ՄԱԿ-ի անդրանիկ կոնֆերանսին հուշագրեր ներկայացրին Հայկական ազգային կոմիտեն և Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը:

65 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Շահապիվանի եկեղեցական ժողովը
2) Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսի նահատակվելը
3) Պերոզի գահակալության սկիզբը
4) Վաչագան Բարեպաշտի գահ բարձրանալը Հայոց Արևելից կողմում
5) Վախթանգ Գորգասալ թագավորի գահակալության սկիզբը
6) Վասակ Մամիկոնյանի որդու՝ Մանվելի սպանությունը
7) Մավրիկիոս կայսեր գահակալության ավարտը
8) Խաղամախյայի ճակատամարտը
9) Վահրամ Չուբինի ապստամբությունը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) հայոց գահի հանձնումը Տիգրան VI–ին
2) Միհրդատ Պոնտացու փախուստը Հայաստան
3) Արեգ–Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
4) Պոմպեոսի զորքի մոտենալը Արտաշատին
5) Արտաշեսյանների արքայատոհմի անկումը Մեծ Հայքում
6) Փրաասպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը
7) Արտավազդ III–ի գահազրկվելը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ՀՀ-ի անկախության ճանաչումը Լիտվայի Հանրապետության կողմից
2) ՀՀ-ի դառնալը ՄԱԿ–ի լիիրավ անդամ
3) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ)
4) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը
5) ՀՀ-ի անդամակցելը ԵԱՀԿ–ին
6) ՀՀ Գերագույն խորհրդի վերանվանվելը Ազգային ժողովի
7) ՀՀ–ում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին օրենքի ընդունումը

68 **Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

Ա. Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում
Բ. Բագարան քաղաքում Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր օծելը
Գ. Աղթամար կղզուց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինա
Դ. Տարսոն քաղաքում Լևոն իշխանի օծումը հայոց թագավոր
Ե. Սսի և Ադանայի XIV դ. սկզբների ժողովների որոշումների չեղյալ հայտարարելը
Զ. Եգիպտոսի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար Կահիրե մեկնելը

1) Անանիա Մոկացի
2) Հովհաննես Սսեցի
3) Մեսրոպ Արտազեցի
4) Կոստանդին Լամբրոնացի
5) Գևորգ Գառնեցի
6) Կիրակոս Վիրապեցի
7) Գրիգոր Զ Ապիրատ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Սարգիս Մուրադյան
Բ. Յուրի Պետրոսյան
Գ. Նորայր Կարգանյան
Դ. Սոնիա Պալասանյան
Ե. Գևորգ Գևորգյան
Զ. Ռուդոլֆ Խաչատրյան
Է. Փարավոն Միրզոյան

1) «Հովհաննես Այվազովսկի» արձան
2) «Բազմաչափ օբյեկտ» գեղանկար
3) «Հովհաննես Բաղրամյան» արձան
4) «Զարթոնք» գեղանկար
5) «Ծովակալ Իսակով» արձան
6) «Անվերնագիր» գեղանկար
7) «Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով» գեղանկար
8) «Ծնողներս» գեղանկար

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Պարսկահպատակ հայերի և արևմտահայերի վերաբնակեցմանը վերաբերող ստորև տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

70.1 Պարսկահպատակ հայերի վերաբնակեցման արդյունքում 8 հազարից ավելի հայ ընտանիք անցան Արաքսի ձախ ափը:

70.2 Արևմտահայության զանգվածային վերաբնակեցման արդյունքում կարսեցիները հաստատվեցին Ախալցխայի գավառում և Գյումրիում:

70.3 Թուրքմենչայի պայմանագրի 15–րդ հոդվածով պարսկահպատակ հայերին հնարավորություն էր ընձեռվում տեղափոխվելու Ռուսաստանյան կայսրության նորահաստատ տարածքներ:

70.4 1830 թ. զանգվածային վերաբնակեցման արդյունքում 75 000 արևմտահայեր տեղափոխվեցին Ռուսաստանին անցած հայկական տարածքներ:

70.5 Արևմտահայության զանգվածային վերաբնակեցման արդյունքում բայազետցիները վերաշինում կամ հիմնադրում են շուրջ 50 գյուղ:

70.6 Արևմտահայության 1830 թ. զանգվածային վերաբնակեցման արդյունքում Էրզրում, Վան և Բիթլիս քաղաքները զրկվեցին մեծ թվով հայ արհեստավորներից և առևտրականներից: